ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » հոկտեմբերի 2019 թվականի N: 545-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳԱՌՆԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N113-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գառնառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի հունիսի 21-ի նիստի թիվ 7 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գառնառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Վոլոդյա Խաչատրյանի, Շուշաննա Հովհաննիսյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Սաթիկ Դիլանյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Իրինա Ջանոյանին, Գայանե Ավետիսյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Սաթիկ Դիլանյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գառնառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N113-Ա որոշման հավելվածում «Խաչատրյան Վոլոդյա», «Հովհաննիսյան Շուշաննա», «Աթոյան Գոհար» բառերը համապատասխանաբար փոխարինել «Ջանոյան Իրինա», «Ավետիսյան Գայանե», «Աթոյան Երազիկ» բառերով:

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է